

մինակը կրնայ ապրիլ: Հաւաքականութիւն էք կազմած. գոնէ անոր ալ ընդունակ ըլլայիք: Առէք ազգ մը, դասակարգ մը, նոյնիսկ տուն մը ու միլիոն տեսակ խնդիրներով իրար կը բըզըքտեն մարդիկ: Դուք կը պատերազմիք. լսուա՞ծ է, որ կապիկները ընդհանուր կամ մասնակի պատերազմ ընեն: Ի՞նչ է ձեր կատարած աշխատանքը... Վաճառականութի՞ն, արհե՞ստ, արուե՞ստ, քաղաքակրթութի՞ն: Կեանքին համար անպետ ու նոյն իսկ վնասակար գործեր: Կատարեցէք ներքին աշխատանք: Ամէն մարդ հազիւ պիտի հասնի իր ներքին շինարարութեան, իր ներքին մաքրութեան, իր ներքին կառուցումին: Դուք կ'աշխատիք՝ ոչ թէ շահելու համար ձեր հոգին, այլ շահելու համար արծաթ: (Թո՛ւ, զգուելի սրիկաներ, թո՛ւ): Արծաթը կը ստանայ պոռնիկը, մատնիչը, աւազակը, ոճրագործը: Ու ամբողջ մարդկութիւնը այդպէս է: Տեսնուա՞ծ բան է, որ կապիկը սիրէ արծաթը, պաշտէ ոսկին, խենթենայ գոհարեղէններու համար: Ոսկին ունեցէք ձեր ուղեղին մէջ, արծաթը ձեր արեան մէջ ու գոհարները՝ ձեր հոգիին մէջ, ո՛վ դուք արտաքինի համար ապրող մարդիկ: Բաւակա՞ն են այսքան օրինակներ:

-Շատ իսկ են: Ի՞նչ կրնամ ընել՝ քեզի օգտակար ըլլալու համար:

-Եթէ ամէն մարդ ինքզինքին օգտակար ըլլայ, ինծի բարիք մը ըրած կ'ըլլայ:

-Շիտակը ըսելով, ես քեզ սրամիտ, շէնշող, կենսուրախ արարած կը կարծեի, մինչդեռ դուն խորունկ ու լուրջ խնդիրներ յուզեցիր:

-Լուրջերուն յատակը կեղծիքի վիհ կայ: Այո՛, ես զուարթ եմ, սակայն, իմ զուարթութիւնս իմաստի մը վրայ է: Ես այս լուրջ խօսքերէն վերջ, առանց լրջութենէս բան մը կորսնցնելու, կրնամ կռակս դարձնել եւ թմբուկս ծեծել:

-Ծաղրելո՞ւ համար զիս՝ դժբախտս, որ մարդ ծնած եմ:

-Մարդ ծնած ըլլալուդ համար չէ, որ կը ծաղրեմ քեզ, այլ մարդ մնալուդ համար: